



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա.

Հայրապետական տնօրէնութիւնը

ՅԱՄԻՍՍ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԵՒ ՆՈՅԵՄԲԵՐ

Կոնդակ յանուն վիճ. Կոնսիստորիայի Հ. Երևանի, որով Հաստատելով զՏ. Խորէն արեղայն վանահայր վանուցն Ս. Գէորգայ Մողնւոյ, պատուիրեցաւ զկարգմանէն տալ զիտել Սինօղի Ս. Էջմիածնի. թ. 1114:

— Յանուն Գեր. Տ. Անանիա եպս. ի Առաջնորդի վիճ. Հ. Շամախուոյ, որով պատուիրեցաւ կարգել զՏ. Ընձակ վարդ.՝ն վանահայր վանուցն ս. Ստեփաննոսի Սաղիանու, թովով զՏ. Եփրեմ վարդ.՝ն անդամ վիճ. Կոնսիստորիայի տեղւոյն. թ. 1115:

— Յանուն Ամեն. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ, որով յանձնարարեցաւ յղել զԼեոն սարկաւազն ճէտիտեան ի վանս Արմաշու և ի Ժամանակին ձեռնադրել ի կուսակրօն քհնյ. թ. 1118:

— Յանուն վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ, որով կարգեցաւ Ներսէս արեղայն Հիւրընկալ Հիւրատան Մ. Աթոռոյ. թ. 1119:

— Յանուն Գեր. Տ. Գէորգ եպս. ի Առաջնորդի Հայո.

Եւրոպիոյ, որով թոյլատրեցաւ Զմիւռնացի Մուշեղայ Քէշիշեան, որոյ պսակն լուծեալ էր, մտանել ի նոր ամուսնութիւն. թ. 1129:

— Յանուէն Ամեն. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ տալ տեղեկութիւն զամուսնալուծական գործոյ Պօղոսի Գարիկեան Ղուլթիի գիւղացւոյ և Յովհաննիսի Աստուածատրեան վանեցւոյ. թ. 1146:

— Յանուէն վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ, որով յայտնելով զկարգմանէ Տ. Խորէն արքեպիսկոպի ի վանահայր Մողնւոյ վանուց, պատուիրեցաւ տալ մի խալուար ցորեան վասն սերման. թ. 1150:

— Յանուէն վիճ. Կոնստ. ի Հայոց Երեւանայ, ընդ որում դարձուցանելով զգործ լուծման պսակի Ալէքսանդրապօլցի Յակովբայ վարդանեան Փոլիոլճեանց, պատուիրեցաւ զիմել պատշաճ իշխանութեան. թ. 1167:

— Յանուէն Ամեն. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ լուծեալ Համարել զպսակ Կ. Պօլսեցի Պայծառի Գ. Քիւղիւքեան ընդ խելագար առն. թ. 1170:

— Յանուէն Առաջն. Տեղապահի վանայ, որով լուծեցաւ պսակն Արտամեացի Յարութիւնի Թումայեան ընդ պոռնիկ կնոջն Աննամանի տալով առաջնոյն իրաւունս վերստին ամուսնութեան. թ. 1174:

— Յանուէն Տ. Ներսէս Արքեպիսի, Թեմակալին Քիշնեի, որով կտրդեցաւ ի նախանդամ վիճ. Ատենին Տ. Յուսիկ վարդ. և Զոհրաբեան. թ. 1180:

— Յանուէն Տ. Յուսիկ վրդպտի. Զոհրաբեան, որով կտրդեցաւ նախանդամ վիճ. Ատենին Քիշնեի. թ. 1181:

— Յանուէն Գեր. Տ. Ղևոնդ եպիս. որով պատուիրեցաւ տալ վարդապետական առաքան, Ներսէս, Մեսրոպ, Արտակ և Զաւէն արքեպիսի. թ. 1183:

— Յանուէն Առաջնորդի Հայոց վրաստանի և Իմէրէթի Գեր. Տ. Գէորգ արքեպիսի, որով պատուիրեցաւ յաւելուլ զսոթիկ Փոխանորդին Գանձակայ Տ. Բենիկ վարդ. ի 200 բուբլեաւ. թ. 1191:

— Յանուէն Ղևոնդ վարդ. ի Բարսեղեան, որով կար-

գեցաւ վանահայր վանուց ս. Նախավկայի, որ ի Պարսկաստան. թ. 1195:

— Յանուէն Ամեն. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ զամուսնալուծական խնդիրն Աւետար Մէս-ճեան Ագշէհրցւոյ, որ հասեալ է ի Պատրիարքարան, ընդ քննութեամբ արկանել. թ. 1203:

— Յանուէն Տ. Աղամ վարդապետի, որով կարգեցաւ վանահայր Ս. Խաչ վանուց Արգեազու. թ. 1205:

— Յանուէն վիճ. Կոնստ. Հայոց Երեւանի, որով յայտնեցաւ կարգումն Տ. Աղամ վարդապետի ի վանահայր Ս. Խաչի. թ. 1206:

— Յանուէն Տ. Կարապետ վարդապետի, որով կարգեցաւ Փոխթեմակալ Հայոց Երեւանայ և նախագահ Հոգաբարձութեան Թեմական դպրանոցի տեղւոյն. թ. 1219:

— Յանուէն Տ. Մեսրոպ վարդապետի Մագսուտեան, որով կարգեցաւ Փոխանորդ և Թեմական տեսուչ վիճակացն Սալմաստայ և Ուրմիոյ. թ. 1220:

— Յանուէն Թեմակալին Հայոց Քիչնէի, որով լուծեցաւ պսակն Տաճկահայտակ Կարապետի Պետրոսեան ընդ կնոջ նորա Սովիայի Պետրով, թոյլատրելով առն յետ միամեայ ապաշխարութեան մտանել յերկրորդ ամուսնութիւն, իսկ կնոջն զրկել յամուսնանալոյ յետ այսու յեկեղեցւոջ Հայոց թ. 1231:

— Յանուէն Սինօղի Ս. Էջմիածնի, ընդ որում յղեցան վկայականք Արտակ և Զաւէն վրդպտոց ի հաստատել թ. 1237:

— Յանուէն Առաջնորդի Հայոց Աստրախանի Գեր. Տ. Արիստակէս Արքեպսի, որով պատուիրեցաւ զԾուխս Եկատերինադար քաղաքի բաժանել հաւասարապէս ի վերայ երկոց քահանայից տեղւոյն. թ. 1138:

— Յանուէն Գեր. Տ. Ղևոնդ եպս. ի, որով պատուիրեցաւ ածել յաստիճան սարկաւազութեան զՄկրտիչն Մելքոնեան. թ. 1260:

— Յանուէն վիճ. Կոնստ. Հայոց Երեւանայ, որով հրամայեցաւ թոյլ տալ պսակել զապօրինի կենակիցս՝ զՍարգիսն Խլոյեան և զՇողակաթն Մարգարեան Ղազանժար գիւղացիս. թ. 1266:

— Յանուհն Սինօղի Ս. Էջմիածնի, ընդ որում յղեցան վկայականք Աւետիս Տ. Գառապարեան յաղագս ընդունելոյ զնա ի հօգևոր կոչումն կուսակրօնութեան, թ. 1284:

— Յանուհն Սինօղի Ս. Էջմիածնի, ընդ որում դարձուցաւ անստորագիր օրագիր նորին, որ վասն ձեռնադրութեան Կարապետի Տ. Յովհաննիսեան Ուլիա-Նորաշէն գեղջ, պատուիրելով մերժել զձեռնադրութիւն նորա, թ. 1307:

— Յանուհն Առաջնորդի Հայոց Բեսարարիոյ, ընդ որում դարձուցաւ դործ Հոգ. Կառավարութեան Ն. Նախիջևանի, մերժելով լուծումն պսակի Պարսկահպատակ Միքայէլի Բուղղանեանց, թ. 1312:

Բ.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ Յանուհն Առաջնորդի Հայոց Ամերիկայի Գեր. Տ. Յովսէփ Եպս. Սարաճեան որով շնորհեցաւ նմա տիպոս Արքութեան: թ. 1187:

— Կամիլաւկայի յանուհն Մակար քհնյ. Անտոնեան Շամախեցւոյ, ըստ միջնորդութեան թեմակալի վիճակի, Գեր. Տ. Անանիա Եպսի:

— Քահանայական լանջախաչի յանուհն Մինաս քհնյի Վարդապետեան Շուշեցւոյ, ըստ միջնորդութեան թեմակալի վիճակին Գեր. Տ. Գրիգոր Եպսի. թ. 1157:

— Յանուհն Տ. Մեսրոպ քհնյի Զարնջի գեղջ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական, վասն ջերմեռանդ ծառայութեան նորա ի տնտեսական գործս Մայր Աթոռոյ. թ. 1294:

Գ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք:

Կոնդակ յանուհն այրի Վառվառեայ Խիզանեանց և որդւոց նորա յաղագս նուիրաբերելոյ ի յիշատակ հանգու-

ցեալ առն առաջնոյն Կոստանդնի Խիզանեանց զշորս հարիւր
բուքլիս. թ. 1136:

— Յանուէն բնակչի Ուլիս-Նորաշէն զեղջ Նիկողայոսի
Մահաեսի Սայաթեան վասն տեղափոխելոյ ծախիւք իւրովք
զխողովակս ջուրց ի վանս Ս. Խաչի Արքեպոս. թ. 1140:

— Յանուէն Մկրտիչ Պէյի Մարկոսեան Ատենապետի
Յաննատողովոյ հանդանականութեան Երամեան կրթարա-
նին վանայ. թ. 1173:

— Յանուէն Տիկին Վառվառեայ Խապարաշեան Ն. Նա-
խիջեանցւոյ վասն նուիրեալ վեց ուրարաց Մայր ատճարի
Ս. Էջմիածնի. թ. 1828:

— Յանուէն Փոխանօրդի Հօտին Սիւնեաց Տ. Ներսէս
վրդախ վասն յղեալ 10 օրինակ աշխատութեան նորա ընդ
անդամբս. « Հայոց եկեղեցական իրաւունքք ». թ. 1277:



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ա Ն Պ Տ Ո Ւ Ղ Թ Ջ Ե Ն Ի Ն

(Թարգմանութիւն)

Երուսաղէմում գտնուած ժամանակ Յիսուս սովորա-
բար գնում էր Բեթանիա՝ Ղազարոսի մօտ գիշերելու:
Այդտեղ՝ անձնուէր բարեկամների շրջանում Յիսուս հան-
գիստ էր առնում օրուայ աշխատանքից: Այդպէս արաւ
նաւ հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնելուց յետոյ:
Ամբողջ օրը Յիսուս մնաց տաճարումն, ուսուցանում էր
ժողովրդին և բժշկում հիւանդներին. ապա թողնելով
տաճարը՝ ճանապարհ ընկաւ քաղաքից գէպի Բեթանիա
և գիշերը այնտեղ անցկացրեց: Առաւօտեան Երուսաղէմ